ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/109

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Բողոք բերող՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած

հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.09.2020թ.-ին:

22.09.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը վերադարձվել է՝ դրանում առկա թերությունները շտկելու համար:

Ընկերությունը 23.09.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

23.09.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը կրկին վերադարձվել է՝ դրանում առկա թերությունները շտկելու համար:

Ընկերությունը 24.09.2020թ.-ին կրկին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

24.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/109 համարի ծածկագիրը:

02.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 24.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի սեպտեմբերի 08-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27 ծածկագրով բաց մրցույթի հրավեր: Հրավերով սահմանվում է հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված մինչև 2020 թվականի սեպտեմբերի 18-ը ժամը 15:00-ը:

Հրավերով սահմանվում է, որ այն կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի

Առողջապահության նախարարության կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մեր ընկերությունը, հանդիսանալով բժշկական սարքավորումների խոշորագույն մատակարարներից մեկը ՀՀ-ում, ինչպես նաև ունենալով այս մրցույթում ընդգրկված բժշկական սարքերի մատակարարման և սպասարկմսն հարուստ փորձ, հետաքրքրված էր մրցույթին մասնակցությամբ:

Սակայն, հրավերի ուսումնասիրության ընթացքում մեզ համար պարզ դարձավ, որ մրցույթի հրավերը կազմվել է ՀՀ Գնումների մասին օրենքի և գնումների գործընթացը կարգավորող մի շարք իրավական ակտերի խախտումներով:

Մասնավորապես.

Ըստ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն որոշման՝

16. Գնման գործընթաց սկսելու հաամար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվսծ դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասսխան լրացում կատարելու պայմանով:

Տեղեկագրում չգտանք ՀՀ առողջաւղահության նախարարության գնումների պլանի փոփոխություն, որտեղ ընդգրկված կլիներին այս գնանշման հարցումով նախատեսված սարքավորումները:

Մյուս կողմից PPCM համակարգում «ՀՀ առողջապահությւսն նախարարություն» Պատվիրատուի գնումների պլանում առկա են ուլտրամանուշակագույն ճառագայթման բժշկական սարքեր, ռենտգեն սարքեր և թթվածնի մատակարարման սարքեր տողերը, որոնք, ըստ PPCM-ի ավելացվել են օգոստոսի 27-ին: Սակայն, նշված ապրանքներից և ոչ մեկի համար գնման ենթակա քանակ նշված չի, բոլոր տեղերում գնման ենթակա քանակը 0 է (տես կից):»:

Ի պատասխան ԳԲՔԱ-ԼՕ-2020/109 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած դիրքորոշմանը, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից նշված փոփոխությունները, որոնք կատարվել են PPCM համակարգում միգուցե հասանելի են հենց Պատվիրատուի մուտքանունով մուտք գործելու և դիտելու դեպքում, սակայն այդ փոփոխությունները չեն երևում հնարավոր մասնակիցների մուտքանուններով դիտելու ժամանակ: Փաստացի, ստացվում է, որ կատարված փոփոխությունները հասանելի չեն հնարավոր մասնակիցներին (այս պնդումը հիմնավորող փաստաթղթերը, այսինքն մասնակիցներին հասանելի PPCM-ում հրապարակված ցանկը ներկայացրել ենք Բողոքի հետ միաժամանակ):

Բացի այդ, Պատվիրատուն որևէ կերպ չի մեկնաբանել գնումների պլանի համապատասխան փոփոխությունը տեղեկագրում հրապարակված չլինելու մեր պնդումը: Խնդրում եմ, հրապարակված լինելու փաստը հիմնավորող ապացույցներ ներկայացնել:»:

Ելնելով վերոգրյալից, «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.09.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14637-2020 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ.-ին

ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 01.10.2020թ.-ին թիվ ԼՔ/06.3/23170-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2020 թվականի սեպտեմբերի 28-ի Ձեր թիվ ԲՔԱ-ԼՕ/14637-2020 գրության՝ առողջապահության նախարարությունը ներկայացնում է իր դիրքորոշումը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 2020 թվականի սեպտեմբերի 24-ին «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ:

Առողջապահության նախարարությունը 2020 թվականի սեպտեմբերի 8-ին հայտարարել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնման ընթացակարգ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան (հայտերի բացման օրը՝ 18.09.20թ. ժամը 15:00-ին):

Բողոքաբերի բողոքը առնչվում է վերոնշյալ գնման ընթացակարգի գնման առարկաները գնման պլանում ներառված չլինելուն և առ այն, որ գնումների պլանում չի իրականացվել համապատասխան լրացումը: Վերոգրյալի կապակցությամբ հայտնում եմ, որ եթե գնման առարկան ներառված չլինի գնումների պլանում, հնարավոր չի լինի իրականացնել գնման ընթացակարգը: Իսկ բողոքաբերի այն պնդումը, որ PPCM համակարգում 27.08.2020թ. առողջապահության նախարարության կողմից իրականացվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկաների մասով ավելացում գնումների պլանում, սակայն նշված առարկաներից և ոչ մեկի համար գնման ենթակա քանակ նշված չէ և բոլոր տողերում գնման ենթակա քանակը 0 է՝ չի համապատասխանում իրականությանը (կից ներկայացվում է PPCM համակարգում 27.08.2020թ. իրականացված 2020 թվականի գնումների պլանի լրացումը հավաստող փաստաթղթից արտատպված սկան տարբերակը):

Ելնելով վերոգրյալից առողջապահության նախարարությունը չի ընդունում «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկաների գնման պլանում ներառված չլինելու և PPCM համակարգում կատարված լրացման մեջ գնման ենթակա ապրանքների քանակը նշված չլինելու վերաբերյալ դիտողությունները:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/109 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 08.09.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 18.09.2020թ.-ին ժամը 15:00-ն ներառյալ:

iii. 09.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է ընթացակարգի փոփոխված հրավերի մասին հայտարարություն:

iv. 11.09.2020թ.-ին, գնահատող հանձնաժողովի 11.09.2020թ.-ի թիվ 4 որոշմամբ, www.gnumner.am կայքում կրկին հրապարակվել է ընթացակարգի փոփոխված հրավերի մասին հայտարարություն:

v. Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 10 հատ պացիենտի մոնիտոր ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33191550/504,

- 2-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 10 հատ թթվածնի մատակարարման (CPAP) սարքեր ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 331541280/504,

- 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 150 հատ ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպ (օդի ռեցիրկուլյատոր) ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33151340/501,

- 4-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ թթվածնային կայան ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33151280/505,

- 5-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ ռենտգեն սարք ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33111100/501,

- 6-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ թորակոսկոպիկ վիրաբուժական հավաքածու ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33141223/501:

vi. www.armeps.am/PPCM/ կայքում առկա ՀՀ առողջապահության նախարարության 27.08.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժիններով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով ապրանքների համար նախատեսված քանակները նշվել է 0:

vii. www.gnumner.am կայքում մինչև 08.09.2020թ.-ը առկա տվյալների համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ բացակայում են «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկաները՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի

հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 10 հատ պացիենտի մոնիտոր ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33191550/504,

- 2-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 10 հատ թթվածնի մատակարարման (CPAP) սարքեր ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 331541280/504,

- 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 150 հատ ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպ (օդի ռեցիրկուլյատոր) ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33151340/501,

- 4-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ թթվածնային կայան ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33151280/505,

- 5-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ ռենտգեն սարք ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33111100/501,

- 6-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ թորակոսկոպիկ վիրաբուժական հավաքածու ապրանքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33141223/501:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա՝ ՀՀ առողջապահության նախարարության 27.08.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժիններով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով ապրանքերի համար նախատեսված քանակները նշվել է 0:

www.gnumner.am կայքում մինչև 08.09.2020թ.-ը առկա տվյալների համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ բացակայում են «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկաները՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է առանց գնումների պլանի՝ իրավական հիմքի: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնումների պլանը հաստատված և հրապարակված չէ՝ սահմանված պահանջներին համապատասխան, իսկ գնման առարկան՝ համապատասխան քանակների նշմամբ ներառված չէ գնումների պլանում: Ինչպես նաև www.armeps.am/PPCM/ կայքում Ընթացակարգի 1-6-րդ չափաբաժիններով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով ապրանքերի համար նախատեսված քանակները նշվել է 0, այն դեպքում, երբ ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում առկա բոլոր չափաբաժինների համար սահմանվել են քանակներ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ առողջապահության նախարարությունի կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է առանց իրավական հիմքի, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/109 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**